

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1335-Ն
որոշման մեջ լրացում կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության
որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«.....» 2018թ. N.... -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1335-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը Հայաստանի Հանրապետության կառավարությունն որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում՝ անասնաբուժության բնագավառում օգտագործվող պատվաստանյութերի, շիճուկների և փստորոշիչ միջոցների պետական գրանցման կարգը և դրանց պետական գրանցման վարձի չափերը հաստատելու մասին» N 1335-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետից հետո լրացնել նոր 1.1.կետ հետևյալ բովանդակությամբ.

«1.1.Սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի համաձայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցները կարող են շրջանառվել բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում :»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ